




Տարեկան րաժանորդագրւածն է՝ Երևանի մէջ երկը բոլորի իսկ Երևանից դուրս—ամեն տեղ—շտը բոլորի կանխիկ վճարելի:

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով: Իրաքանչիւր բառի վճարն է 2 կոպէկ տոպան անգամի տարադրութեան համար:

Ստորագրութեան ուղարկուած գրութիւններ պէտք է լինին մաքուր գրուած, հեղինակի ստորագրութեամբ ու ճիշդ հասցեով:

Գրութիւնները թէ յոգուածները կարող են վերադարձնել փոփոխութեան կը վերադարձնեն: Բնականաբար պահանջողներն և առանց բացատրութեան:

Բաժնետիրական շաբաթական մի թիւրով: Հարց 15 Յունիս 1883

ԲՈՎԱՆՈՒՄԱՆՈՒԹՅՈՒՆ
Երբ ճշմարիտ է: Ընդհանուր ժողով լինածն է: Մեր գործընկերները ինչպէս կ'ընեն յանձնարարութիւնը: ԹՂԹԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝—Վարչապետութիւնը: ՏԵՂԱՍԱՆՆԵՐ՝—Ինքնակառավարչութիւնը: ԲԱՆԱՍՆԵՐ՝—Մարմինը: ԶԱՆՈՒՄՆԵՐ՝—Բաժնետիրական շաբաթական մի թիւրով:

ՇԱՅ ԶԵՄԱՐԻՑ Է
Պատկերն այս համարով մեզն է գործում իր կեանքի շարքերը տարին նա լոյս աշխարհ դուրս եկած օրից մինչև այսօր յառաջ է բռնել իր նշանակաւոր երկերն աշխարհը, երկերն յառաջատու և երկերն արագ ընթացքով: Պատկերն ունեցել է իր պակասաւոր կողմերը: Պատկերն շատ անկաշիւ միջոցներ է անցրել, շատ ձախող գէպերից է անցել: Պատկերն շատ անգամ երկարակեղ է մեղադրանքի, բայց միայն իրեն է յայտնի, թէ որքան արժանի է դրան... Իրեն ստիպել են այդպէս լինել այնպիսի հանգամանքներ, որոնց դէմ մաքառելի իր ուժից, իր զօրութիւնից վեր է ելել: Բայց ո՞վ է ներքին կեանքով հետաքրքրվողը... Մեր ժամանակում ծաղրի ու ծանակի է արժանանում նա, որ իսկապէս արժանի է կարեկցութեան: Նա՞ որ ճշմարիտ խօսող է, որ անկողնապաշտ ձայն է... Մեր ժամանակում ո՞վ նշանակութիւն է տալիս անձնական յարաբերութեանը, երբ

ԲԵՆԵՍԻՐԵԿԱՆ
ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ 25 ԱՄԵԱՅ ԹՈՒՆԵՆԻ ԱՌԹՈՒԹՅՈՒՆ

Մարդկային ցեղի բարոյական զարգացումի պատմութեան մէջ միշտ մի ուղեցոյց է անհնկում:
Այդ ուղեցոյցն է՝ մարդի պն ընդունակութիւնը, որը նրան կարողութիւն է ապրել օրոշելու: Բարին պիտանին, շարից, անպիտանից: Թերին՝ անկատարը: Կատարելագործվածից՝ կատարելացի:
Այդ միջոցովն է, որ մարդկային ազգը աստիճանաբար հեռացել է անտառների անապատների վայրերում լինելից և հասել է քաղաքակրթութեան պիտանի աստիճանի բարձրութեանը:
Սեռերի պայմաններում իրերի գործողութիւնների մէջ եղած բարին և չարը իրարմից որոշելու, ճանաչելու և միմեանցից զանազանելու կարողութիւնը՝ քննադատութիւնն է մեզ տալիս:

Հասարակականը կայ աշխի առաջ, ով է խոնարհում անձնականը: Հայերի, ազգականական կապերի ու կեղծաւորութեան առաջ, ով է ինկարկում անգամ և անարժան, անպէտք ու փտութար մեծաններին, ով է լեզուում այն աջը, որից աշք ունի հայի փշուր ստանալու, ով է մեծորում փողաւորին, ով է բծում, չէ շողբորթում—նա զին չունի, նա դատաւարանի է, նա հայհոյելի անդամն է:
Այո՛, մեր ժամանակում բարեկամութիւնն փայլելու, սէր, յարգանք, անուն, նշանակութիւն, պատիւ ըստանալու համար պէտք է լինել կեղծաւոր, խորամանկ, բուռ, բանասրկութիւն: Պատկերն հեռու լինելով այդ յատկութիւններից, ունեցել է և ունի իր արեանը ծարաւի բազմութիւն թշնամի, որոնք ամեն ձիւք, ամեն հնար ի գործ դնել են ձգտում նշանակելու, դատաւարանելու, անգամ և գազարացնելու նրան...
Պատկերն առում է, Պատկերն հայտնում, անգամում է, Պատկերն թշնամի է բարձր աստիճանի ու կոչումի վերամբարձած կաշառակեր ու փտաբարձր կախիկապաշտ, վարդապետ, բահստան, տեղիքն աստուածաբանը, սուս մաքիտորսը, առաջնորդական վսեմ աթոռի վրա բազմող կեղծաւոր ու նիւթապաշտ առաջնորդը, Հայոց դպրոցների լեկը ձեռքն առնող թիւթեամբ, անբարեխղճ, սեկոպէկի առաջ մինչև գիտին երկր-

Սրտիկան մարդկային կեանքի փորձաքարն է:
Գրականութիւնը, այժման քաղաքակրթութեան համաստեղող արարիչը, ստեղծել է նրան, կրեակային, մարդկային սրտերի, գործողութիւնների հետ շփվելու համար, որպէս զի ճանաչվի, զտվի կեղծը իսկականից: Ըստորինը վսեմից, անարժանը արժանաւորից: Երբ թերին կատարելագործվի, սեռը ուղղվի ու պայտնով կենցաղափարութեան բարձրութիւնը յառաջ գնայ:
Երբ գրականութիւնը զիտ մանուկ է, դրա համար էլ նրա ծնունդը՝ կրեակական, իսկապէս թղթ է: Դրա թուլութիւնն է որ մեր մէջ մինչև այժմ բացակայ է մնացել հասարակական աշխատ դատաստանը:
Մեր հասարակութիւնը արժանաւորին էլ է պատվում անարժանին էլ: Մի մարդի միասակար է ընդհանրութեան, բայց հարուստ է, հասարակութիւնը նրան արհամարհելու տեղ, պատվում է անկարկութիւն ունենալով կամ երկու կրեկը նրա ուժից: Նշելով և

պագող վերադարձնելը, տեսնելը, Հայոց ազգի համար ապագայ սերունդը տարաբարակելու, ապագայ գործիչներ կերտելու հրաւիրումն անաշխիւ, գնում յատկութիւնների, ամարդ խորհուրդներով լի սրտի տէր մանկավարժը, անգէտ ուսուցիչը հրապարակաւ սուրբ պաշտօնը ոտնակոխ առող, իրիճ ու զրիճ վաճառող, անձնական հոգեյրներից, գրական ամեն սրբութիւնը զոհող թղթակից—յոյուածագրիչը, ինքնազգրիչը:
Այո՛, դրանք ամենքը ծարաւի են Պատկեր արեանը, որովհետեւ նա ամեն քայլափոխում մարդկանց, շանթութեմ գրանց: Երբ հայտն է երևան է հանում դրանց լարած որդայթները, վերցնում է դրանց իրենի զինակները: Երբ հայտն է նա փռածին վրտած, վտարն վտա է առում սեւին սեւ, գողին գող, առաջնին առաջակ լուրովին պարզ լեզով համարձակ և դէմ յանդիման կրեկով տանց ուրիշների պէս պատէ: Կատ զխաշելու առանց ողբաբան ո՞ր, տանց կողմնակի ճանադարհների...
Պատկերն այսու հետե էլ պիտի շարունակէ իր ընթացքը նոյն ճանապարհով: Պատկերն թշնամի է այն բոլորին, որոնք հասարակականից առաջ իրենց անձը ի նկատի ունին: Այո՛, Պատկերն անարարհը փշտ է: Բայց նա ամեն տեղութեան մէջ կը տանի փշերի խալթացը փշերին էր յիտե թողնելու: Համար...:

մի հասարակական գործող, գրող, որը անարժանապէս յարգվում է, նրա դէմ ելելը դժկամակայութիւն էլ լինի: Համար կը մնայ և այդ չեղք դժկամակութիւնը հաւանութեան կարգն է անցնում:
Այդպիսով մեր հրապարակական գործողները վրա, հասարակաց անաշխտ վճիռ, կանարող չէ կարող կազմել:
Այդպիսով հասարակութիւնը մեռնում էր թաւը—չար խոռոնուրդի յետադիմութեան մէջ, առանց կարողանալու ճանաչել և միմեանցից զանազանել, որովհետեւ ոյթման չարիքների մեծ մասը, բարի, օգտակար անունների աակն են դիմակաւորված:
Հասարակութեան մէջ գտնված հասկացող դասի պարտքն է առաջնորդել նորնպէս քննադատութեան մէջ: Քաշել պատուել կեղծից պաճուճող վարագործը և մերկապարանց ցոյց տալ ամենին գառան մերթու ստիւրում կեղծաւորված գայլին:
Կեղծաւորութիւնը մեր մէջ դեռ ոյթ է համարվում: Երբ պատուականի պէս

Պատկեր—տեսնում—որ մէկի ետ լից բռնում է, էլ բայց չի թողնում:
Հայոց ճշմարիտ է: Պատկերն որ այն «մէկը» նոյն «մէկը» է հասարակութեանը փտաբարակ, հասարակութեանը մարդիցնող, հասարակութեանը սուտ բարեկամ, դաւաճան, հասարակութեան համար ապիւրառ անգամ, փտանգարի գործիչ, ծարաւի, այո՛, Պատկերն երբեք թողնում չէ այդ «մէկի» օձիքը, միշտ շանթիւ, հարաւոր է իրեն, միշտ ու չընչացնի, միշտ յիշեցնելու է հասարակութեանը այդ «մէկին» այնքան ժամանակ, մինչև որ բոլորովին հողին հասարակացին հասարակութեանը փտաշող այդ «մէկին»:
Ճշմարիտ է, սրտով Պատկեր կը բողբ մոցնի իր թշնամիների թիւը, որովհետեւ այդպիսի անթիւ «մէկ» երբեք է բաղկացած մեր արդի գործողների դատաւարը, բայց փայլ է: Նուց է մինչև անգամ ոյդպիսի «մէկ» լը ունի շատով իրեն Պատկերն ոչնչացնեն, բան թէ Պատկերն նրանց: Այդ էլ փայլ է: Մի անգամ ընդ միշտ թող հասկացած լինին դրանք թէ այն էլ ճշմարիտ է, որ Պատկերն մինչև իր վերջին շունչը պատերազմելու է այդ «մէկ» երբ դէմ, որ Պատկեր վերջին խօսքը կը լինի՝ մոհայդ «մէկ» լին, որ Պատկերն սրտով յանձն կառնի թունտ որ բաժակը մինչև իսկ տակ ծըծել, բայց երբեք չի դաւաճանիլ իր նշանաւորը, չի չեղուի իր բռնած ճանապարհից:
Փախելով և մեր մանուկ գրականութեան վզին և խեղդում է:
Այդ երես տաւ կեղծաւորութեանը է, որ միշտ աշխատում է պսակ դնել բթամտութեան գլխին, արձան կանգնացնել յետադիմութեան:
Աւելի լաւ բացատրելու համար տեսնենք, ես օրինակ եմ բերում անցեալ 1882 Դեկտ. 26 ին Տփլիսում կատարված Մեղու—Հայաստանի Թոբելանը:
Այդ Թոբելան կատարել է Տփլիսի յիւնիքի, սրտի և փողի արիստոկրատիան: Բայց ո՞ր մեծ ծառայութեան ո՞ր արդեանց համար, Ի՞նչ գրական ազգային օգուտ է տվել այդ թերթը իր 25 ամեայ կեանքում: Աւերջիչեալ արիստոկրատիան մեզ ոչինչ չասեց և ձեռնտու էլ չէր ասել, Հասարակաց անաշխտ դատաստանի առող դնելու համար գործը, մի քանի խօսքով մի ակնարկ պէտք է արձակել այդ լաւ գրի աննախանձիկ անցեալի վրա:
1858 ին Տէր Ստեփան քահանայ Մանգինեանը սկսում է հրատարակել

զաւ հասկացնել տալ հայ ժողովրդին, Կարգը հայի համար անհրաժեշտ ու նախնական հիմնարկութիւն դարձրեց, կրթութիւնը, մայրենի լեզուն հայ մանկուտ համար պահանջ, կարիք համարել տուեց։ Ահա Կերպ Գ. Վաթուկիկաթ ամենուրեւ գործը։

Բայց դպրոցները նիւթակտը ապահովելու միւս և ոչ պակաս մեծ խնդիրը ապաստմէ տարագոյ Վաթուկիկաթին։ Մենք ունինք դպրոցներ թէ արական և թէ իգական։ Նրանցից շատ քչերն են ապահոված նիւթական կազմից։ մեծ մասը դոյր թիւնը խախտու է։

Մեր դպրոցները կուսակալութեան ժողովրդի տուրքերով, սակայն խախտու է այդ տուրքերը ժողովրդականացնելու, ոչ թէ մշտական այլ և տեղական ևս չի կարելի համարել։ Այս հիմնարկութիւնը չէ ժողովրդի տուրքերով ապահով։ Բայց որքան զանազան են այդ տուրքերի տեսակները... Մենք ունինք մեր քաղաքում հայոց Սեմինարիա, որ հազիւ հազ կարողանում է 4 դասասուն պահել։ Ունինք ծխական դպրոցներ, օրհորդական դպրոցներ, ամենքի վեճակն էլ նիւթական կազմից անախանելի է... Նրանք չեն տարուհի այլ միայն շնորհ են նրանք զուրկ են մշտական ու հաստատ կանոնադրից։ Նրանց կանոնադր ողորմութիւնն է. իսկ ողորմութեամբ շատ երկար ժամանակ չի կարելի ապրել, և վերջապէս այդ ապրուստը ապրուստի նման չի կարող լինել։

Դրանցից ոչ պակաս անախանելի վեճակն էլ չեն և մեր միւս տեղերի դպրոցները։ Մի ժամանակ ինչքան բերկրութեամբ որ հայի ականջին էր հասնում այս կամ այն տեղում նոր դպրոց բանալու աւանդը, այժմ տանապառնիս աւել արտաթիւնում հային են հասնում այս կամ այն տեղի դպրոցի փակման դոյժը, ինչպէս Վարսինը։ Մի քանի տարի էլ եթէ շարունակուի այս անապարհով, դուրս փակվին մեր դպրոցները մեծ մասը, որովհետեւ հիմքները աւազի վրա են...

Մենք առ այժմ չենք կարող համարել թէ բանի դպրոց ունինք, բանի որ նրանց դոյր թիւնը ապահոված չէ նիւթականապէս։ Ով որ կը լինի այն մեծ մարդը, որ կապահովէ դրանց նիւթականը, նա միայն իրաւունք ունի համարելու և պարծանքով տեսնել թէ ես հայոց ազգին առաջին այբբան դպրոց...

ՍԻՆՈՒՆԻ ԿՈՋՄԱՆ ԾԱՆՆԱԾՈՂՈՎՐ

Անցեալ թւականի Պատկի Ձ 34 գետնաշէնը Վաղարշապատի նախակից արդէն յայտնի է մեր ընթերցողներին, որ Սրբազան Սինոդը ի նկատի ունենալով այն ամեն չարագործութիւնները, որոնք կատարուած են Նորին Ահապատութեան հիւանդ

դութեան օրերում, որոշել էր կազմել մի յանձնաժողով, որ ամենայն տալքով թիւում բնէր և յերեւան ամէր բոլոր վաթիւսար թիւները, Վեհարանից բոլոր դպրոցները թէ թանկագին իրերը և թէ դրամական գումարները։ Բոլորովին այլ խնդիր է թէ ինչ կերպով կը տանի իր գործն այդ յանձնաժողովը և թէ նա կը հասնի իր նպատակին թէ ոչ։ Այդ կախուած է յանձնաժողովի իր հրմտութիւնից ու գործունէութիւնից։ Մեր աչքում այստեղ զին ունի ուղղակի Սինոդի արած քայլը։

Այն բոլոր դասն իրողութիւններէր, այն բոլոր տմարդի գործառնութիւններէր յետոյ, որոնք արել է, գործել է Մանկունին իր արքանեակներով և որոնց ժամանակ ոչինչ ձայն չէ հասնել Ս. Սինոդը, մենք մեզ թոյլ ենք տալ կարծել, որ Սինոդական ասանց բայտաութեան ամենեքեանք ևս ճակից են եղել նշանաց, որ ամենեքեանք էլ վարակուած են նոյն յատկութիւններով, որ ճշմարտութիւնը միւսած է եղել բոլորի մէջ։ Սակայն Սինոդի վերջին քայլը ապացուցից, որ ինքը պատանաւած է եղել այն պատճառով, որ մի գործը կամք, մի գործը իրաւունք ստիպած է եղել նրան պաշտնաւորելու, մանաւանդ որ իր ամբողջութիւնն էլ քայքայուած է եղել։ Սինոդի վերջին կարգադրութեամբ մենք համոզուեցինք, որ սինոդականներից ոմանք միշտ անհաշտ աչքով, անհամակիր կերպով են վերաբերվել դէպի չարութեան գործը բանակի ընթացքը, որ նրանք կարծես թէ յարմարաւոր դէպքի են սպասելու եղել դրանց դէմ բոլոր բարձրացնելու համար, դրանց վրա դատաւոր հանդիսանալով՝ դրանցից համար ու հաշիւ պահանջելու համար։ Եւ հենց այդ ցանկալի բոպէն ժամանելուն պէս առաջինը են դուրս գալի մին և այդ ժամանակ արդարութեան ճիշդութեւ կուսակիցները և ձայն են բարձրացնում, ճշմարտութեան ստուշով պահանջում են արգար բնութեան... Հակառակ բանակը թոյլ է զգում իրեն տառաջան պէս անտուշու, արհամարհելու դրանց։ Նա խոնարհվում է այդ իրաւացի պահանջի առջ և այսօր զլիակտը, ամբթապարտ ու խայտառակութեամբ՝ եպատում է գործի վերջին...

Չարութեան կողմնակից բանակի բռնութեանը ոչ պակաս նպաստել է և մամուլը իր ուղղութեամբ։ Նա պահանջում էր անպայման հրազանդութիւն մեծաւորի կամքի առաջ։ Նա մինչև անգամ պաշտպանութեան մեծի սնունդով գործողն սխալ, չար ու փառքութեամբ քայլերը։ Նա մեղադրում էր արդարութեան համար անախանելի ընդդ հոգեւորականին, նա բարեւակը նրա վրա ամենաանասկ զրոյստանքներ, ամենատեսակ սխալներն էր միայն այն պատճառաւ, որ այդ հոգեւորականը բաջութիւն էր ունեցել բոլոր բարձրացնելու անար-

գարութեան դէմ, բաջութիւն էր ունեցել պաշտպան դուրս գալու էջմիածնի շահիրին։ այո՛, մեր մամուլը չբարոյստ անուշով մկտեց այդ տեսակ հոգեւորականներին Այս ամենից յետոյ շատ հասկանալի է, որ Սինոդականների արդարակոյս անգամները ձայն չը պիտի հանէին, պապանաւելու պիտի դատապարտուէին մինչև ի յարմարաւոր բոպէն, բանի որ նրանք, մի կողմից բոպարձակ ճակտտեղով իրենց անգամ ապօրինի իշխանաւորի կամքին, պէտք է նիւթար կուէին նրա չարաչար հալածանքներին, միւս կողմից՝ պիտի նիւթարկուէին նաև մամուլի դատապարտութեանը։ Այն մամուլն ենք ասում, որ մինչև անգամ վերջին օրերս էլ չնորհալուութեան հեռագրեր ստացաւ և տպագրեց իր էջերի մէջ այնպիսի եպիսկոպոս անձերից, որոնց յետին երեսն անգամ ճանաչուած, որոնց տըմարդի արարքները էջմիածնի անխոս պատերն անգամ կը վկայեն...

Այդ այն մամուլն է, որ յաստիկ դատապարտում է այն մօրը, որ սընախաութիւնից կուրացած՝ հիւրերի ներկայութեամբ ուրիշ պատրաստած խորովածն է տալիս իր մանուկին, որին դու կաթ է հարկաւորու։ Բայց մինչև երկինք բարձրացընում է այն մօրը, որ 25 տարի շարունակ իր անունով, հիւանդոտ կաթը ջանքերով իր մանուկին՝ բըթացրել է նրան, վախկոտ, երկշտ է դարձրել հեռու պահելով ամեն բանից, ինչ որ կաթ չէ... Նա մինչև երկինք է բարձրացնում, աստուածացում է այն մօրը, որ իր մանուկին միշտ մանուկ է կամենում ճանաչել, իր գուարձասիրութեանը, իր խաղաղութեամբ բաւականութիւն տալու համար, իր հովանաւորութիւնը, իր հոգաբարձութիւնը վրան միշտ ուղղակի ունենալու համար...

Բայց մենք ընդհանրապէս չենք կարող բոլոր սրտով չը համակրել սինոդականաց այդ վարմունքի համար, դրանով ցոյց տուին, որ նրանք անխոտ են, մանակից չեն Մանկունու և նրա արքանեակների վատթարութեանը... Թող յանձնաժողովը իր գործն ամեն արթնութեամբ, ամեն հմտութեամբ յառաջ տանէ։ Թող նա տքնի հրապարակ հանել բոլոր գեղծմանները, այն բոլոր բըստըմնելի արարքները, որոնք կատարած են անբարեխիղճ ձեռքեր և որոնցով այսօր նսեմանում է բոլոր հայ հոգեւորականի անունը և վարկը...

Բաւական էր, որքան անհաստատ իմ անձեր անպատիւ մնացին։ մի գաղ զաս տու էք դրանց, մի լաւ յիշատակ թողէք, որ ապագայում ևս ունենայ իր նշանակութիւնը ծոյց տուեցէք, որ հաստատութեւ էք էջմիածնին, որ բծախնդիր էք հայոց հոգեւորականութեանը արատիք պատճառով վատագործներին, որ պաշտպանէք արդարութեանը։ ցոյց տուե-

ցեք որ դուք մանուկ չէք կաթ ուտող։

Յանձնաժողովը հարկաւոր էր անպատճառ հարկաւոր էր։ Ծանկանում ենք, որ նա գործի ամենայն հմտութեամբ և բաջութեամբ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԵՐ

Վ.Ս.ՂԱՐՇԱՊԱՍԻՑ

12 Յունի.

Անցեալ անգամ ինչպէս գրած էի Տէր Սարգիս Աղաջանեանցի վարմունքին մասին, այժմ էլ հարկ կը սեպեմ պարբերական ելուցանել, որ չը նայելով այն կամ այն հրամանագրերին նա կարողացաւ իր նպատակին հասնել։ մի կերպով ինքն իրեն յառաջ ցցեց իր ստուշը. բուն թէ Սինոդը կը մտածէր խուզարկող ուղարկել նրա թղթերը խուզարկման ենթարկելու համար։ Աւերջապէս Տէրաւորը գնաց ամեն բան կարգաւորեց, ամեն բան տեղաւորեց և այժմ արդէն լուծու է որ գալու է...

Ամենից առաւել Պատկի ընթերցողը հեռաբարբրութեւ պիտի լինի Գեորգեան Բարդուղիմէոս վարդապետին վերաբերութեամբ։ Գեորգեան Պատկի էր միայն որ պաշտպանեց Բարդուղիմէոսին որ բողոքեց այն վերին աստիճանի անամութեւ յանդուգն վարմունքի դէմ, որ գործը զրեցին Վանկունին և իր արքանեակը։ Բարդուղիմէոսին ոտնակոխ տորել հրամայելով միայն ստիպաւ պաշտպան զապետաց, Սինոդական եպիսկոպոսաց ինչի յառաջ. այո՛ Պատկի էր միայն որ թէն անուած ձայնով, բարբարոսական այդ քստմենի արարքին դէմ թուր ժայթքեց։ վերջապէս անցանք արդէն քացած է...

Միայնակ ժողով կազմեցին և որոշեցին միաձայն խնդիր տալ Սինոդի անունով պահանջելու յետ իրերը Խորվիրապէն Բարդուղիմէոսին, ճշմարտութեան այդ միակ անոյնեանին։ որովհետեւ նա արդարութեան պաշտպան հանդիսանալուն համար պըսոր քնացող այդ հոգեւորականը կարող պիտի լինէր ներկայ պարագաներու մէջ շատ օգնութիւններ հասցնել Գեորգեանի կարող պիտի լինէր և ստաթիկ սպանալներ թափելով՝ յետ են տալիս միաբանութեան տուած խնդիրը... Ինչ հիմանքի դատաստան։ Դատաւոր են հանդիսանում նրանք, որոնք յանգա որի դեր պիտի կատարեն, որոնք այդ գործում Սինոդում ձայն տալու իրաւունք չունեն։ որովհետեւ մեղադրուած են նրանք... Այս հարցում Սինոդը պէտք է դրանց ձայնի իրաւունքից զրկէր...

Հաւաստի տեղեկացած ենք, որ միայնակ այժմ այն խնդիրը մի առանձին բողոքագրով հանդերձ տալու են Նորին Բարձր Սրբաղեութիւն Տեղակալ Միւրաշ Արքեպիսկոպոսին որ կանխած է Վանքի սրտացանների շարքում և որ ամենայն քարութեամբ զանաչնար է լինում շարագործներին զիմապագիւծ անել... Մենք մեծ յոյս ունինք նորին Բարձր Սրբաղեութեան վրա։ Այժմ այն միջոցն է, որ նա միայն էջմիածնի տարեցրու-

Խմբագիր Տրատարակիչ
Վ.ԱՍԱԿ ՊԱՊԱԶԱՆԵԱՆՑ